

ԲԱՌԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՀ ԳԱ քղրակից-անդամ է. Բ. ԱՂԱՅԱՆ

1. ԱՂԱՏ, ԱՂԱՏԵԼ

Առանձին գործածված արմատը նշանակել է «սեր, գուրգուրանք», իսկ բայը՝ «դառնորեն ողբալ»։ Բարբառներում գործածվում է՝ աղատ աղատ «դառնագին, սրտաձմիկ», աղատ անել «գուրգուրալ», աղատով «աղիողորմ ձայնով», աղատով լինել «շատ սիրելի, վրան գուրգուրալ», աղատ-ալաղատ «աղաշանք-սղաղատանք», աղատել «աղերսել, աղաչել, տաղատել»։ Ըստ Հր. Աճառյանի (Արմ., 1) կա և Հձ. Զթ. աղբղ «ողբ»։ Մագում է հնիս. el-, ol- արմատից, որից են նաև հայերեն աղ-ալթ. աղ-աչ-ել. ող-ոմ, ողբ. եղեր/եղար բառերը։ Ըստ այսմ՝ աղատ բառի արմատն է աղ-. իսկ առածանց է (չենք բերում ցեղակից լեզուների համապատասխանություններն ու դուգաբանությունները, որովհետև հայերեն աղալթ. աղաչել. ողբ. ողոմ. եղեր բառերի բոլորին հայտնի ստուգաբանություններն արդեն բավական են սույն ստուգաբանությունը հաստատելու համար)։

2. ԱՆՔԱՏ

Գործածվել է հին մատենագրության մեջ՝ «1. կարոտ, աղբատ, նվաստ. 2. Աղբածակ, ագահ» նշանակությամբ. ունենք նաև անատանալ «կարոտ լինել, կարիք ունենալ», անատույթին «աղբատություն, չքավորություն», անանատ «անկարոտ» բառերը։ Ածանցավոր բառ է անմ արմատից, ինչպես ունենք աղատ. հաստատ և այլն։ Մագում է հնիս. ank- «բռնություն, անհրաժեշտություն, կարիք» արմատից. հմմտ. հուն. ἀγκυρ, «կարիք, բռնություն», հին իուլ. ecen, միջին կիմր. anglicen, կիմր. angen, կոռն. բրետ. anken, «կարիք, անհրաժեշտություն»։ Հնչյունական օրենքների տեսակետից տարօրինակ է հնիս. k>հալ և, ըստ որում հնդեվրոպական տարր խուլերը ձայնորդներից հետո վերածվում են համապատասխան ձայնեղների (հմմտ. *penk>հինգ). սակայն այդ տարօրինակությունը բացատրվում է աղատ բառի համաբանությամբ, որին նմանվել է և՛ -առածանցավոր կաղմություն, և՛ կ>լ փոփոխությամբ. համաբանությամբ տեղի ունեցած այդ կարգի փոփոխության համար կարելի է հիշել տալ «ամուսնու քույր» բառը, որ ծագում է հնիս. g(e)lou- արմատից, և տետը է լինել ծալ. բայց տալգր-ի համաբանությամբ դարձել է տալ (ծ>ա)։

3. ԱՍՏՈՒՃ/ԱՇՏՈՒՃ

Գործածվել է միայն աշտուն հազ «ցամաք հաց» կապակցությամբ աշտուն և աստուն ձևերով. լրագրությունների մեջ ունենք՝ աշտինագույն, աշտնակեր/աստնակեր։ Հնագույն ձևն է աստուն, որի մեջ ս դարձել է շ բա-

ռավերջի ն-ի առնմանությամբ (հմմտ. աստինան > աշտինան): Արմատն է աստ-, իսկ ուն և ին (աշտիձագույն) ածանց են (ուն-ի համար հմմտ. պարկ-ուն): Ծագում է հնիւ. as- «այրել, տոշորել» արմատի ը ածականով ձևից՝ azd > աստ- (հնիւ. zd հայերենում օրինաչափորեն դառնում է ստ. հմմտ. *ozd > ոստ, *nizd > նիստ). ցեղակից լեզուների համապատասխանություններն են. հուն. ἄσ «այրել, շորացնել», ἄσφρις «շորանալ», չեխ. և լեհ. ozditi «շորացնել», լատ. areo «շորանալ», aridus «շոր, շորացած», ardeo «այրել» և այլն: Նույն արմատից են նաև հայ. ազ-ազ-ել «շորացնել» (արմատի gh-ով ածած՝ azgh ձևից. հմմտ. գերմ. գոթ. azgon «մոխիր»), ռուսից «շոր, ցամաք, անջրդի» (դարձյալ ը ածականով, բայց նախահունչ ո ձայնավորով՝ ozd+ին) և վերջապես՝ աֆրիկ. (gy ածականով՝ azgy- ձևից. հմմտ. հին իսլ. aska, գերմ. Asche, անգլ. ashes «մոխիր, աձյուն» և այլն):

4. ԱԻԵՏ (ԱԻԵՏԵԼ, ԱԻԵՏԻՔ)

Գրաբարում գործածվել է աւետ իբրև անկախ բառ «բարի լուր, ուրախալի լուր. բարև, ողջույն» նշանակություններով, բայց ավելի հաճախ՝ աւետիք ածանցավոր ձևով, և իբրև բայ՝ աւետել: Գրվել է նաև աւէտ ձևով, սակայն ածանցումների մեջ առկա է միայն աւետ (առանց է>ի փոփոխության): Ծագում է հնիւ. aud «խոսել» արմատի aued, aueid ածած ձևերից, որոնցից օրինաչափորեն ստացվում են աւետ (aued) և աւէտ (<aueid). ցեղակից լեզուներում ունենք. հուն. εὐα «փառաբանել», հին. հնդկ. vadati «խոսում է, ողջունում է», vandate «գովք, պատկատալից ողջուն», հուն. αἰεῖω (<αFeidω) «երգել», թուր. B watk, AB wätk. B. yaitk «հրամայել» և այլն:

5. ԲԻԼ, ԴԱԼ

Այս երկու բառերն էլ հանդիպում են Սյունեցու «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ, հետևյալ հատվածում. «Իսկ առասական է, այսինքն, տեսականոր անուն, որ զհասարակական ինչ էութիւն ասէ, որպէս մարդ կամ ձի կամ ոչխար կամ արջառ և այսպիսիք ամենայն ազգ կենդանեաց, ածականաց և անաձից, եւ վասն այնորիկ ասէ հասարակական զայսոսիկ. զի ի սոցանէ բաժանին մի մի անհատ գոյացութիւնք՝ Մարկոս, Աղամ, հայր, որդի, թոռն, խնձորի, տանձի, մանուշակ, շուշան, տլփին, սղոցն, դալն, լոբն, բիլն, կապոյտն, ուկիան: Իսկ սեռականաւ իմն այս ի բազումս կոտորի, որք են առասականք. և այսք են սեռքն. կենդանի, տունկ, բոյս, ոչ կենդանի, սձական, անաձ, ցամաքային, ջրային, երկնային, հրային, օդային, թևաւոր, թռչուն, զազան, շորքոտանի, սողուն, լուղակ, զիւուն, խոտաբուս, ձենընդել, վայրենի, քանդի ամենեքին սորա ի բազում տեսակս բաժանին, զորս առասական ասէ»:

Բառարաններում (ՆՀԲ, ԱԲ, ՋԲ) բիլ բացատրվում է «բաց կապոյտ», իսկ դալ «դեղնա-կանաչավուն»: Այս վերջին բառը բնություն առնելով՝ Հր. Աճառյանը համարում է դալ-առ բառի արմատը և ծագած համարում հնիւ. պարզ dhel արմատի ստորին ձայնդարձով dhl ձևից: Հետագայում, սակայն, մերժում է թե՛ իր ստուգաբանությունը, և թե՛ բառարաններում տրված

¹ Н. А допп, Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград. 1915. էջ 207—208:

բացատրությունը, և «Արմատական բառարանում» երկուսն էլ համարում է ձկնանուններ, տալով հետևյալ մեկնաբանությունը. «ՆՀԲ սխալմամբ մեկնում է բառս «դալարագույն ինչ կամ դեղին» և համեմատում է իտալ. grigio «դեղին» բառի հետ: ԶԲ «թուի թև արմատ դալար և դալուկն բառից»: Այս հիման վրա Աճառ. Բազմ. 1898, էջ 370—1. կցում է դալար բառին և սրա հետ միասին հանում հնիս. dhal ամրատի dhj ձայնդարձից: Ուղիղ մեկնությունը տվավ Մ. Աբեղյան (տե՛ս Բիլ բառի տակ)»: Իսկ Բիլ բառի տակ գրում է. «ՆՀԲ մեկնում է բառս «բաց կապույտ» և սրանից է հանում պլուզ կամ բլուզ (վերջին ձևը գոյություն չունի) և համեմատում է իտալ. blu «կապույտ», թրք. buludi «ամպագույն, կապույտ» բառերի հետ: Ավելի խոհեմ է ԶԲ, որ դնում է «թուի բացագույն կապույտակ»: Երկուսն էլ հավասարապես սխալ են: Վերի հատվածում գույների մասին խոսք չկա բնավ, այլ բույսերի և կենդանիների: Հեղինակը շարում է նախ մարդկային սեռի անուններ, հետո բույսեր և հետո ձկներ. այսպես, ձկան անուն են հայտնապես՝ ղլփին, սղոց (սղոցաձուկ), լոֆ (այժմ լոբո) և կապույտ. ձկներ պետք է լինին նաև դալ և ովկիան բառերը և մանավանդ Բիլ, որ երկու ձկների միջև է գտնվում: ՆՀԲ շփոթվել է կապույտ բառից՝ առնելով գույնի իմաստով, որին հետևել են դալ «դալար», լոֆ «կարմիր»:— Այս պատվական մեկնությունը թևադրեց ինձ մեր համալսարանի դասախոսներից՝ հայագետ Մանուկ Աբեղյան» (Արմ., 1): Դժվար է, իհարկե, հակաճառել երկու խոշորագույն հայագետների, սակայն մենք կարծում ենք, որ տրված մեկնաբանությունը կարող է լրացման: Թյուրիմացություններից խուսափելու համար նախապես ասենք, որ մենք հաշվի չենք առնում այն փաստը, որ հայ նոր գրականության մեջ, հատկապես քնարերգության մեջ, հաճախական դործածություն ունի բիլ բառը «բաց կապույտ» նշանակությամբ: Մեր բանաստեղծները բառարաններից են առել բիլ բառը, և այնուհետև մեկը մյուսից սովորելով՝ գործածել: Այնպես որ, արդի գրականության լեզվում բիլ բառի հաճախական գործածությունը ոչ մի նշանակություն չի կարող ունենալ Սյունեցու հիշյալ հատվածի բիլ բառը բացատրելու համար: Հենվելով Մ. Աբեղյանի բացատրության վրա, Հր. Աճառյանը բիլ և դալ համարում է ձկնանուններ, որովհետև «հեղինակը շարում է նախ մարդկային սեռի անուններ, հետո բույսեր և հետո ձկներ», ըստ որում ովկիան բառը նույնպես ձկան անվանում է համարում (դժվարանում ենք ընդունել): Ինչպես տեսնում ենք, մեծանուն հայագետների համար միակ հիմունքը բառերի շարքն է՝ մարդկային սեռի անուններ, բույսեր, ձկներ: Սակայն իրականում այդ շարքը այլ կերպ պետք է բացատրել. մեջ բերված հատվածում Սյունեցին խոսում է անունների մասին, հակադրելով «հասարակական» և «սեռական» հասկացությունները. հասարակականը, ըստ Սյունեցու, այն անուններն են, որոնցից «բաժանվում են մի մի անհատ գույացություններ». այս վերջինների համար իբրև օրինակ բերում է՝ Մաբկուս, Աղամ (հատուկ անուններ), հայր, որդի, քուռ (անձի հասարակ անուններ), խնձորի, տանձի, մանուշակ, շուշան (բուսանուններ), տլփին (ձկնանուն) և այնուհետև՝ սղոցն, դալն, լոֆն, բիլն, կապույտն, ովկիան: Օրինակների ամբողջ շարքը դիտելով՝ տեսնում ենք, որ սղոց, դալ, լոֆ, բիլ, կապույտ բառերն ունեն որոշիչ հոգ, իսկ մյուսները՝ ոչ: Պատճառը պարզ է. բոլոր մյուս բառերը, այդ թվում և վերջինը՝ ովկիան, գոյականներ են, մինչդեռ որոշիչ հոգով բերվածները՝ անվաններ (սղոց բառն էլ՝ ըստ մեր քերականների մեկ-

նություն՝ սուղ-ոց «սղող, կարճացնող, կտրող» է, ալսինքն՝ դարձյալ ածական): Ստացվում է այն, որ ն հոգով բեքված բառերը բոլորն էլ ածականներ են՝ գոյականաբար առնված (սղոցը, դալը, լոբը, բիլը, կապույտը): Արդ, եթե ընդունենք էլ, որ դրանցով հեղինակը ձկների ղանապան տեսականերն է անվանում, ապա պարզ է, որ բիլ, դալ, կապույտ և լոբ անվանումները տրված են ըստ գույնի: Այս տեսակետից առանձնապես ուշագրավ է կապույտ բառը. իսկապես այդ անվանումով ձուկ կա, որ Հր. Աճառյանն էլ հիշում է «Գավառական բառարանում»՝ նշելով Նրեանի խոսվածքը: Մեղրու շրջանում Մեղրի գետի ձկների մի տեսակը կոչվում է կիպիտէ, որ է կապույտ(կ). իրոր էլ այդ ձուկը կապտագույն է: Նշանակում է, բիլն և դալն էլ, եթե նույնիսկ ձկնանուններ են, ապա գույն ցույց տվող բառեր են եղել նախապես: Ըստ այսմ, բիլ «բաց կապույտ» և դալ «դեղնա-կանաչավուն» բացատրություններ, որ տալիս են ՆՀԲ, ԱԲ և ՋԲ, ձիշտ են: Այս եղանակով մենք միավորում ենք Աբեղյան-Աճառյանի մեկնաբանությունները նախորդ բառարանների բացատրությունների հետ. բիլ և դալ գույների անվանումներ են, որոնք գոյականաբար գործածվել են ձկների անվանման համար՝ ըստ գույնի, ինչպես կապույտ-ը: Հասկանալի է, որ մեր այս բացատրությունից հետո Հր. Աճառյանի ստուգաբանությունը՝ դալ < ճնխ. ճի! մնում է ուժի մեջ:

6. ԳԱԻԱԿ

Բառիս արմատն է գալ, որ առանձին չի գործածվել, սակայն գաւէղ «մեծ և գեր գաւակ ունեցող» բառը հաստատում է, որ գաւակ-ի ակ-ն էլ ածանց է: Ըստ Հր. Աճառյանի՝ հայերենից են փոխառվել վրաց. և թուրք. ջօջօ շանասունի գաւակ, ողնաշարի ծայրը» բառը (Արմ., 1, էջ 527): Ծագում է հնիւ. uat «կորացնել, ձկնել» արմատից. հմմտ. լատ. vatax, -acis «կոր կամ ծուռ ոտքեր ունեցող», valius «դեպի ներս ծեված, կոր», գերմանական warwan «կորուցնել, ձկնվածք», նեդ իմաստով՝ «զիստ», հբգ. wado «զիստ», հաքս. uuathan «սրունքի ուռուցիկ մասը»: Հայերենի համար այս ստուգաբանությունը անընդունելի կլիներ հնիւ. t > հայ. v փոփոխության պատճառով, ըստ որում ձայնավորից հետո հնիւ. t-ն հայերենում դառնում է v: Սակայն պարզ արմատը պետք է դնել va-, ինչպես հավանական է համարում Պոկոնին (էջ 113)՝ հենվելով լատ. varus «դեպի իրար թեքված, կորացած, ծուռոտ» բառի վրա: Հայերենը հիմք է տալիս հաստատելու, որ պարզ արմատն է va- և միաժամանակ երևան է բերում p-ով ածած ձևը (*\a-p->գալ):

7. ԳԺՏԵԼ

Գրաբարում գործածվել է ներգործական և չեզոք-կրավորական ձևերով՝ «բարկացնել, դայրացնել, սիրտը ցավացնել» և «նեղանալ, խռովել» իմաստներով: Լիակատար քերականության մեջ (հատ. 6, էջ 631) Հր. Աճառյանը արմատն է համարում գծիտ կամ գծուտ, չորոշելով՝ թե դրանցից ո՞րն է ձիշտ (իբրև չստուգաբանված բառ): Կարծում ենք, որ ձիշտն է գծուտ, կազմված գիծ բառից, -ուտ/-ուտ ածանցով: Պետք է դասել հին շրջանի ժողովրդա-խոսակցական բառերի շարքը, որից և թափանցել է գրական լեզվի մեջ: Կազմության և իմաստի տեսակետից համեմատելի է վնւ+ուտ > դիւտ, դիւտել բառը, ինչպես և՛ արդի ժողովրդա-խոսակցական գծվել, գծվեցնել:

8. ԴԱՂԱՊԱՐ/ՄԱԳՐ

Բերելով այս բառը «Արմատական բառարանում», Հր. Աճառյանը գրում է. «ԴԱՂԱՊԱՐ, «մագր». այսպես ունի բառ. Երեմ. 72 (նույնը նաև երկրորդ տպագրության մեջ) ինչ լինելը հայտնի չէ» (1, էջ 616): Սխալագրությամբ են առաջացել և՛ դաղապար, և՛ մագր կեղծ բառերը. առաջինը դաղապար բառն է, որ կա նույն Բառ. Երեմ. 75-րդ էջում՝ ԴԱՂԱՍՐ «տապար» ձևով, իսկ մագր-ը՝ տապար բառն է՝ սկզբնատառի շփոթությամբ (Տ և Մ) և հետագա աղավաղումով. ըստ այսմ՝ Երեմիայի բառն ուղղելի է՝ ԴԱՂԱՊՐ «տապար», որով և երկու կեղծ բառեր դուրս կգան արմատական բառերի ցանկից:

9. ՀԱԽՏ (ՀԱՏ)/ՅԱԽՏ (ՅԱՏ), ՀԱՏ, ՀԱՏԱՆԵԼ/ՅԱՏԱՆԵԼ, ԶԱՏ, -ԱՆԵԼ, ՀՈՒՆԴ, ՀՈՒՆԶ

Հատ (հօտ), յատ (յօտ), հատ (հատանել) արմատը հայերենի ձևական, բառակազմական, իմաստային և գործառական շատ մեծ դարգացում ապրած արմատներից է: Իբրև առանձին բառ այժմ էլ գործածվում է՝ հատ «1. կորիզ, կուտ, 2. որևէ բանի (հաշվվող առարկայի) մեկ միավոր, 3. հյուսվածքի՝ գործվածքի յուրաքանչյուր հանգույցը» նշանակությամբ. գրաբարում գործածվել է «1. կտրելը, 2. կտոր, հատված, 3. սերմ, հունդ, առանձնապես ցորենի և այլ հացաբույսերի հատիկ, 4. կորիզ, կուտ, 5. վերջ, ծայր» նշանակություններով: Արմատական այդ ձևը երևան է գալիս հատանել բայի անց. կտր. դ դեմքում (հատ կամ եհատ), հրամ. եղակիում (հա՛տ), ինչպես և բաղմամբիվ բաբդությունների և ածանցումների մեջ՝ «1. կտրող, կտրված, 2. հատիկ» և այլ նշանակություններով (վիմահատ, գանձահատ, թաթահատ, գարեհատ, դեղահատ և այլն): Անհոգակապ բաբդությունների մեջ կորցնելով հ հազարը, վերածվել է -ատ ածանցի (համատ, հերատ, ականջատ... և բացատ, խրամատ և այլն): Իմաստային տեսակետից հետաքրքրական է գրաբարյան հատանալ բայը, որ նշանակում է «մանր հատերի վերածվել, փշրվել»: Նախդիրներով և նախածանցներով ունենք՝ զատ «առանձին, մեկուսի, տնջատված, հեռու», նհատ «պակաս, թերի», րնդհատ, որ գրաբարում նշանակել է «տարբեր», իսկ այժմ՝ «բնդմիջված»: Արմատի երկրորդ ձևն է յատ. որ բոլոր իս կազմվել է յ նախդիրով (ինչպես ունենք զատ՝ հ-ի անկումով, այնպես էլ՝ ի հատ > իհատ > յատ). որին իբրև տպացույց կարող է ծառայել յատակ բառը, որ ունի նաև առակ (հայց. հոլ. դատակ, նախդիրով տրական՝ յատակ) ձևը: Հնարավոր է բացատրել, սակայն, նաև հ-ի լծորդությամբ, ինչպիսին ունենք, օրինակ, հիսգ և յիսուն բառերում (հ և յ հնիս. ք-ի գիմաց): Երևում է այս ձևից էլ յատանել «կտրել, ծառի և հատկապես՝ խաղողի վաղի մատները էտել», յատող «էտելու դանակ»: Արմատի այս երկու ձևերին զուգահեռ ունենք՝ հատ (հօտ) և յատ (յօտ) «խաղողի վաղի կտրած ձյուղ», հատել (հօտել)/յատել (յօտել) «էտել», հատող/յատող «հատող, էտելու դանակ» և այլն: Զևերի և իմաստների այսպիսի բազմազանությունը (մանավանդ յատել և յատակ բառերի կարծես թե իրար հետ ոչ մի կապ չունեցող իմաստները) պարմանալի չէ, որովհետև բոլորի հիմքում բնկած է նախնական «կտրել, հարվածելով կտրել, հարվածել՝ խփել կտրելու համար» իմաստը: Մագում է հնիս. քա- «հարվածել, հատու կերպով հարվածել, հարվածելով կտրել» արմատի քա- ձևից՝ ներկայի ժամ ածած հիմքից՝ քա- > հատ, հատ: Ցեղակից լն-

զուների համապատասխանություններն են. լատ. pavio, -ire «հարվածել, խփել, դռփել, տռփել», pavimentum «տռփանած գետին, հատակ», pudet, -ere «ամաչել» (իբրև՝ ամոփահար լինել, ամոթի խփվել. հմմտ. դրաբար՝ բնդ ամօթ հարկանել, զամօթի հարկանել, յամօթ հարկանել), հբգ. uritur, arūrian, անգսբ. a-furan «կտրատել, կտրտել», լիտվ. pjautu «կտրել, քաղել, հնձել, մորթել, սպանել» (հմմտ. հայ. խփել «հարվածել» և «սպանել»), pjúklas «ողող», pjutis «հնձի ժամանակ. օգոստոս», լատվ. plaut «հնձել, քաղել», plava «մարգագետին», հին պրուս. piucian «մանգող», լեհերեն նաև հուն. παω «խփել»: Հայերենն իր բազմիմաստությունը ներկայացնում է գրեթե բոլոր ցեղակից լեզուներում հնխ. արմատի ստացած նշանակությունները և դրանով իսկ հաստատում մեր ստուգաբանության իսկությունը: Սակայն հայերենն ունի ևս երկու բառարմատ, որոնք է՛լ ավելի ամրապնդում են այս ստուգաբանությունը և, մյուս կողմից, միավորում ցեղակից լեզուների երևան բերած բոլոր իմաստները. դրանք են՝ հունդ, որ ունի նաև ունդ (հնում ավելի գործածական) և հունձ (հնում՝ սովորաբար հունձ՝ հոգնակիով) բառերը: Հունդ բառը ծագում է արմատի pu-ն- ձևից՝ -to ածանցով (*pu~to>հունդ), քսկ հունձ՝ pun-g'ho ձևից. հունդ և հունձ (դ-ն) բառերի միջև ունենք նույն հարաբերությունը, ինչ որ՝ խանդ և խանձ: Վ. Պիզանին մեր հունձ բառը հանում է հնխ. enek՝ «հասնել» բառի ենթադրյալ onk'os ձևից, որ հիշում է նաև Պոկոռնին (էջ 316), առանց իր հավանությունը տալու: Այս ստուգաբանությունը ճիշտ չէ. հնխ. k՝ հայերենում բոլոր դեպքերում տալիս է ս. տվյալ դեպքում, հենց այդ արմատից ունենք հայերեն հասանել, հասլի լարմատի nk՝ ձևից՝ հանս-, ռնգայինի անկումով՝ հասանել): Եվ այսպես՝ ձևի և իմաստի ճշգրիտ համապատասխանությամբ ու տարբեր կազմություններով իրար հետ միավորվում են և հնխ. peu-, pəu-, pu- արմատի հետ կապված հայերեն հատ/հատ, յատ/յատ, -ատ, զատ, յատուկ, հատիկ, յատակ/ատակ (հմմտ. լատ. pavimentum «տռփանած գետին, հատակ»), հունդ (հմմտ. հայ. հատ և հատ-իկ), հունձ(f), «հնձելը, հնձելու ժամանակը, ամառ, հնձած հացաբույսը» (հմմտ. լիտվ. և լատվ. բառերը), ինչպես և այժմյան գրականում գործածվող և տերմինի արժեք ստացած կտ, էտել, էտոց բառերը, որոնք յտ, յտել, յտոց բառերից՝ պատմական հնչյունափոխությամբ ծագած բարբառային տարբերակներ են:

10. ԵՐԴ/ՀԵՐԴ, ՀՈՒՐԴ

Թե՛ գրաբարում, և թե՛ բարբառներում լայնորեն տարածված ու գործածական բառ է, որ նշանակում է՝ «1. տանիքից բացված անցք՝ լուսամուտ, 2. տուն, 3. տնեցիներ, բառաբար, գերգաստան»: Երանից են՝ երդակից «հարևան, դրկից», երդահամար «ծխահաշիվ, տների՝ ծխերի թիվը», երդումարդ «տնվոր» և այլն: Բարբառներում գործածվում է երդի՝ ձևից ծագած զանազան տարբերակներով (հմմտ. Մուշ յերդ-իկ, Սեբ. յերդ-իդ, Ախց. Կր. էրթիկ, Զզ. յերթիկ, Վն. կաթիս ևն), նախահունչ հ-ով հերդ(ի՛) ձևերի տարբերակներով (հմմտ. Թբիլիսի հիեր, հիերթիկ, նաև՝ էրթիկ), Ողմ. հէրաէս, Երև. հէրթիկ, Գոր. հէրթ) և վերջապես հ նախաձայնով և ու>ու ձայնավորով՝ հուրդ ձևի տարբերակներով (հմմտ. Մեղրի հուրդ, Կարձեան հուրդ, Կարվաբէնդ հուրդ (Վարձավար), հուրթ (Կուրիս, Գուղեմնիս), Ղարաբաղ հուրթ,

Մոկբ հուրառաւ ինչ անկէրի այս բաղմաղան տարբերակները համապատասխան հնչյունական օրենքների համաձայն հանգում են երեք նախածէի՝ երդ(իւ), հերդ(իւ) և հուրդ(իւ), ըստ որում Մեղրու, Գորիսի, Ղարաբաղի, Կաքավաբերդի և Կարճեանի բարբառներում ու-ն ստացվում է նախնական ու-ից: Նկատի ունենալով այդ երեք ձևերը, մենք դրանք կապում ենք հնիւ. per-, perə, «1. մյուս կողմը տանել՝ վարել՝ մղել, 2. ճանապարհ բացել, 3. (իրեւ գոյական) մուտք, անցք, 4. նավակ» արմատի per-to/por-to ածանցավոր ձևերի հետ, որոնք օրինաչափորեն տալիս են՝ հերդ (ո բնով), հուրդ: Ցնդակից լեզուներում համապատասխան ձևերն են. ավեստ. pəθatus «մուտք, հուն», լատ. portus «գոտ, դարպաս», հին կիմր. rjē «հուն», կոռն. rjē «ծանծաղուտ», լատ. augi-portus «նեղ անցք՝ անցում», հուն. πύλος «անցք, մուտք, անցում» և այլն: Նույն արմատից են ծագել հայերեն հուրդ «անցք, անցում, բացված ճանապարհ», հուրդել «գնալ», հուրդան տալ «առաջ մղել», հերհուրդել «առաջ խաղալ», ուրդ «ջրի անցք, ջրանցք, ջրի խողովակ, ավազան», ինչպես և հերիւն: Երդ բառի համար կասկածի տեղիք կարող է տալ per-to>հերդ (ո հոլովում) սպասվող ձևի նախահունչ հ-ի կորուստը. սակայն բարբառներում պահպանված հ-ով ձևերը ցույց են տալիս, որ այդտեղ էլ ունենք հ-ի անկում, ինչպես, օրինակ, ասւ բառի սկզբում, որ ծագում է հնիւ. pok'u արմատի ստորին ձայնդարձով pək'u ձևից (հմմտ. նաև հնիւ. post>հայ. քստ ևն): Դա նշանակում է նաև, որ բարբառային ձևերի նախահունչ հ-ն հետագա հավելում է, այլ նախնական հ-ի պահպանումը. մյուս կողմից, բարբառային ս և ո ձայնավորներով տարբերակները նշտորեն համապատասխանում են հնիւ. ձայնդարձի վեբին և միջին աստիճաններին: Այս ստուգաբանությունը մերժվում է մեր այն ենթադրությունը, թե հայ. երդ բառը կարելի է ծագած համարել հնիւ. rel արմատի ստորին ձայնդարձով լե ձևից²:

11. Թ Ե Ի

Իմաստի մեծ զարգացում ստացած և մեծ թվով բաղադրություններ ու դարձվածներ կազմող բառ է, լայնորեն դործածական թե՛ հին մատենագրություն մեջ, թե՛ արդի բարբառներում, և թե՛ ժամանակակից զրական հայերենում: Նախնական իմաստն է «թռչունի թև», ապա՝ «ձկան լողակ, մարդու բաղուկ, նավի դեկ» և այլն: Ծագում է հնիւ. pēt «ընկնել, թռչել» արմատի ստորին ձայնդարձով pte- ձևից՝ -wō ածանցով: Ցնդակից լեզուներում իմաստային զուգաբանություններն են. ավեստ. pəθəy «փետուր, թռչունի թև, ծառի ճյուղ կամ տերև», պարս. pəθəy «թռչունի թև, թռիչք, թռչուն, լողակ, հագուստի թևը, սրի բնրան, տնրն», սանս. patra «թև, փետուր», patara «թռչուն, թռչող, փախուսական», չոգ. iēdara, անգլ. iēder անգլ. iēather, հին իսլ. iēðr, լատ. penna «փետուր» և այլն: Նույն արմատից են ծագում նաև հայերեն p, n. pte, pter, pteq բառերը, որոնց մասին մանրամասնորեն խոսվում է Արտասական բառարանում՝ լուրարանչյուրի առկա: Հայերենի պահած -wō ածանցի համար համեմատելի է հուն. πτερό «աչ, ճրկյուղ», որ ծագում է նույն արմատից -v մասնիկով (πτερο-):

2 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 7, էջ 17:

12. Հ Ա Կ

Այս արմատն իր նախնական իմաստով առանձին քիչ է գործածվել. Դավիթ Անհաղթի մոտ հանդիպում է «հակառակ, ընդդեմ» նշանակությամբ. սակայն հակել «միտել, դեպի մի կողմ թեքվել», հակամէտ «մի բանի միտված (և ոչ թե՛ միտելուն հակառակ)», տրամադիր մի բանի, հոժար» և նման բառերը ցույց են տալիս, որ նաև «թեքվել, դեպի մի կողմ ուղղվել» իմաստն է նախնական: Հետագայում այս երկու իմաստները զարգացել են դեպի ինքնուրույնություն, և այժմ հակ «հակառակ, ընդդեմ» (իբրև նախածանց) և հակ-, (հակել, հակում) «միտելը, թեքվելը» սռանձին արմատներ են դարձել: Ծագում է հնիւ. sag «հետամտել, (հոտոտելով) հետապնդել» արմատից: Նախալեզվի համար այս բառը համարվում է հին որսորդական բառ, որից ստացվել են «քննել, հետախուզել, գուշակել», բայց և՛ «հակառակել, կովել» և նման իմաստներով բառեր, ինչպես՝ հուն. ὑλάω, դոր. ἀνέω, «առջևից գնալ, առաջնորդել», լատ. sagio, -ire «գզալ, կռահել», հին իուլ. sagio «մի գործի գնալ. որոնել», կիմր. haeddu «վաստակել», հին իուլ. sar «վիրավորանք, անպատվություն, անիրավություն», միջին կիմր. sayrhaed, նոր կիմր. sarhad «վիրավորանք, անպատվություն», գոթ. sokjan «որոնել, քննել, վիճել», sōkns «որոնելը, քննություն, վիճելի հարց», անգսք. sōcn «քննություն, հարձակում, գրոհ, արդարապատություն», գոթ. sakan, sok «հակառակել, կովել», հրգ. sahha «կոխ, վեճ. դատական գործ», հին իուլ. saka «բողոքել, փնտսել», sāttr «հաշտեցում», իսթ. šak(k)-, šek(k)- «գիտնալ, իմանալ»: Հայերենն իր իմաստով ավելի մոտ է գերմանական և կելտական լեզուների բառերին, որոնց մեջ գերիշխում է «հակառակություն-թշնամություն-վեճ-կռիվ» նշանակությունը: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս հակ- «միտում, թեքվելը դեպի մի կողմ, միտելը» նշանակությունը, հայերենի համար պետք է կանխադրել նախնական ընդհանուր «մի բանի ուղղված շարժում՝ ընթացք՝ գործողություն» իմաստը:

13. Հ Ո Ի Ս Կ

Հաճախական գործածություն ունի գրաբարում, բայց առավելապես հուսկ յետին, հուսկ յետոյ, հուսկ վերջին և նման դարձվածների մեջ. նշանակում է «հետին, վերջին, ամենավերջին», որից և ստացվել է նաև «բոլորովին, ծայրագույն, ամենա-» իմաստը (հմտ. հուսկ կրսութն, հուսկ յեզր մագաղաթին և այլն): Ծագում է հնիւ. post արմատից՝ -wo մասնիկով ածանցված postwo ձևից: Հնդեվրոպական արմատի պարզ ձևն է pos, որից՝ հին եկեղեցասլավոնական pos, բլգ. pas, հին պրեզ. pasā բոլորն էլ «հետո» նշանակությամբ: Ցեղակից լեզուների մեջ ավելի շատ առկա է t, r, ko և այլ աձականներով ու ածանցներով, ինչպես՝ լատ. post «հետո», հուն. դոր. ποστέ «հետո», թուր. B. postam «հետո», հին հնդկ. pasca «հետևը, հետո», ավեստ. pasca «ապա. հետո», լիտ. paskui «հետո», հայ. քսա (<post). Հայերեն հուսկ ստացվել է postwo ածանցավոր ձևից, ըստ որում հնիւ. stw տալիս է հայերեն սկ (հմտ. istwo>իսկ, ostwer>ոսկը):

14. ՊԱՐԵԳՈՏ

Այս բառը համարելով իրանական փոխառություն՝ Հր. Աճառյանը գրում է. «Հայկ. *Paragaud- հոմանիշից, որ թեև զործածված չէ իրանյան գրականության մեջ, բայց նույնն է ավանդում Հեսիթիբե»՝ *παράγωγας* (*παράγωγας*?) *ձևով*. (*παράγωγας* *χρῶν παρὰ Παρθίας* *մերարկու* *ըստ պարթևաց*). նույնը հունական փերջամորությամբ՝ *παράχρῶν*: *Իրանյանից* *ևն փոխառվալ նաև լատ. paragauda, paragaudis, paragaudius* «զգեստի վրա մետաքսե կամ սոկի բանվածք. 2. սոկեհուն զգեստ», *ասոր. մանդ. և թալմ. paragod?* «փերարկու, փարպույր», *արար. ܩܕܐ* *burgud* «հաստ, կապերտ, թանձր ստախ», *փրայ. 3᠗ᠷᠭᠭᠠᠩᠯᠠᠳᠤ* «պարեկավառի» *puza* «հանդերձ, երկար զգեստ»: Այնուհետև ստուգաբանությունների պատմության մեջ գրում է. *La g. Arm. Stud. § 1003* *մեկնում է գօտի բառով, իբր ճշուրջը գոտիով», իսկ էջ 182 լտ. և թալմ. բառերի հետ: Տերվ. Altarm. 80 և նախալ. 92, 107 պար ճշուրջ» մասնիկով գօտի բառից: ...Հիմք տալիս է վերի մեկնությունը, բայց առանց հակառակելու հիշում է նաև պար- գօտի մեկնությունը, ինչ որ չի կարող ուղիղ լինել, որովհետև նախ առանց բացատրության է մնում գօտի բառի վերաձայնի անկումը և երկրորդ պար մասնիկի ալտալիսի զործածությունը հետին է» (Արմ., 5, էջ 969—971): Հր. Աճառյանի վերջին երկու փաստարկները բնորոշելի չեն. ինչպես գիտենք, նա գօտի բառի մեջ տեսնում էր -տի բաղադրիչը (գաւ-տի), այդ պատճառով էլ ստիպված է ենթադրել ի վերջաձայնի անբացատրելի կորուստ. սակայն ինչպես մենք ցույց ենք տվել, գաւտի բարդ բառ չէ, այլ ածանցավոր (գաւ-տ-ի), որ ծագում է հնիւ. *gha-g* > *haw.* *ghad* և հնիւ. *ghaud* > *haw.* *ghaw* *արմատից և նախապես նշանակել է «պատող, պարուրող, ծածկող»:* Ըստ այսմ, պարեգօտ նշանակել է ճշուրջը պատող, շորս կողմից պատող», ինչպես որ ունենք շուրջառ բառը: Սրա համաձայն պետք է ամենից առաջ վերանայել պարեգօտ բառի իմաստի բացատրությունը: Նշե՛ք և մյուս բառառանները, կապելով գօտի բառի հետ, բացատրել են իբր «գօտի ունեցող, գօտիով կապվող վերարկու»: Սակայն բառս նշանակել է պարզապես վերարկու, որ ցույց է տալիս նաև Հեսիթիբուսի վկայությունը (*վերարկու* *ըստ պարթևաց*): Ինչ վերաբերում է այն փաստարկին, թե պար- մասնիկի ալտալիսի զործածությունը հետին է, ապա դա էլ հիմնավոր չէ. պարեգօտ նախաձանցավոր (պար-գօտի) բառ չէ, որովհետև այդ դեպքում պետք է ունենար պարագօտ (հմմտ. *պարագիծ, պարագօտել* «մեջքին գոտի կապել») կամ էլ՝ պարգօտ (առանց հոդակապի, ինչպես՝ *պարբեկություն, պարբերել և այլն*), այլ բարդ բառ (պարե-գօտ), ըստ որում ենթադրում է պար բառի հնագույն բնավոր ձևը՝ պարե (հմմտ. *հեղե-տասան*), կամ պարի (հմմտ. *երկի-հարեր* > *երկիարեր* > *երկերեր*), որով բարդության նախաձևը կարող էր լինել կամ ուղղակի պարեգօտ, կամ էլ՝ պարի-ա-գօտ > պարեգօտ: Իրանական փոխառություն համարելը երևան է հանում մի քանի դժվարություններ. ամենից առաջ՝ պատկերներ հին պարսկերենի երկբարբառները վերածել էր պարզ ձայնավորների, ուստի և՛ պատկերներում չպետք է լինեին *paragaud-au* երկբարբառով ձև (Հեսիթիբոսն էլ բերում է *ա-ով ձև*). իսկ եթե այդ ձևը վերագրենք հին պարսկերենին, ապա *au* երկբարբառի դիմաց հայեհեներ պետք է տեսնար ոյ և ոչ աւ (հմմտ. *հին պրոսկ. gauša* (*gaoša*) *հաւ. գայշ* (*գոյշ*), *պր. gos*, *հին պրոսկ. auja* (*aoja*) > *հայ. ոյժ. պր. oz*, *հին պրոսկ. palti-**

rauka (raoka) > հայ. պառույգ, պհլ. patrōk և այլն): Ըստ այսմ իրանական paragaud- ձևը պետք է տար հայ. պարագույր, ինչպես որ ունենք վարագույր: Այս վերջին բառն առանձնակի նշանակություն ունի մեր կողմից քննարկվող խնդրի համար: Ստուգաբանելով հայերենի վարագույր բառը, է. Բենվենիստը գրում է. «Հայ. վարագույր-ը մենք հանգեցնում ենք *varagōs-ին՝ ստացված մի հին բարդությունից՝ *vara-gauda. երկրորդ բաղադրիչը՝ -gauda- ծանոթ է պարսկա-լատին paragauda բառի մեջ, արամ. թալմ. parḡōa «վարագույր» և միջին իրանական բաղմաթիվ ձևերով. սողդ. γ wō, pī; wō «ծածկոց», հմմտ. ου. aγud «ղզեստ»³: Բենվենիստի այս ստուգաբանությամբ, ամենից առաջ, հաստատվում է մեր այն պնդումը, որ իրան. paragauda-ի դիմաց հայերենը պետք է ունենար պարագույր. այնուհետև, այդ ստուգաբանության համաձայն, gaud բառը հին իրանական լեզուներից այլուստ չի վկայվում, բացի paragaud բառից: Սա մեզ հիմք է տալիս ընդունելու, որ ինչպես paragauda բառն ամբողջությամբ, այնպես էլ նրա gauda բաղադրիչն իբրև առանձին բառ հին իրանականը վերցրել է հայերենից: Մեր ասածը հաստատող մի փաստարկ ևս կա. մեր պարեգոմ-ը իրանական paragauda-ից ենթադրելու դեպքում անբացատրելի է մնում միջին և ձայնավորը իրանական a-ի փոխարեն (հմմտ. *varagauō->վարագույր), մինչդեռ հայերենի ե-ի դիմաց իրանական a-ն բացատրվում է իրանական հին լեզուներին հատուկ e>a ձնչունափոխությամբ, իսկ հայերենի ե-ն բացատրվում է հենց հայերենով. պարեգոմ բառը բուն հայկական բարդություն է՝ պարե-գոմ կամ պարի-ա-գոմ, ինչպես բացատրեցինք վերը: Հեսիքիոսի վկայությունը չի հակասում մեր բացատրությանը, այլ, ընդհակառակը, հաստատում է, այդ վկայության մեջ ասվում է՝ «վերարկու ըստ պարթևաց», այսինքն՝ այդ վկայությունը վերաբերում է պարթևական շրջանին, իսկ փոխառությունը հայերենից կատարվել է շատ վաղ ժամանակներում, այն դարաշրջանում, երբ իրանական լեզուների մեջ գործում էր e>a ձնչունափոխությունը, և երբ նախահայկական դ-ն դեռևս ա չէր դարձել, որի պատճառով էլ իրանականն ունի gaud (և ոչ gaut): Այսպիսով, ինչպես paragauda բառը, այնպես էլ նրա gaud բաղադրիչը իրանական փոխառություն է հայերենից. այդ փոխառյալ բառից իրանականում կաղմվել է *vara-gauda բառը, որից է հայերեն վարագույր: Այստեղ էլ ունենք ալնպիսի երևույթ, ինչպես որ՝ առնելով իրանական գով «գովասանք» բառը, հայերենը կաղմել է գովասան և տվել իրանականին, որ պահպանվելու էր դառնալով gōsan, կրկին վերադարձել է մեզ՝ գուսան ձևով: Անշուշտ, հուն., լատ. և մյուս լեզուների paragaud- բառը պետք է համաբել իրանական փոխառություն, և ոչ անմիջապես հայերենից, և միայն իրանականը դիտել իբրև փոխառություն հայերենից:

Այսպիսով պարեգոմ բառը դուրս է գալիս իրանական փոխառությունների շարքից և դառնում բուն հայկական բարդություն:

15. ՍՏԻ/ՍՏՈՒ

Հին մատենագրության մեջ ստի բառը, ըստ Հր. Աճառյանի, գործածվել է միայն մեկ անգամ՝ «կարգ, պատշաճություն» իմաստներով. դրսևցից է աճստի «անկարգ, անհնազանդ, ստահակ». ստու ձևը առանձին չի ավանդվել.

³ BSL, T. 53 (1957—1958), էջ 69—70:

գործածվել է միայն մեկ անգամ՝ անստու «անկարգ, անպատշաճ, անճոռնի» իմաստով՝ Բարսեղի վեցօրեից արարչության ճառերի թարգմանության մեջ (տպագիրն ունի անյօղ, էջաստորի ծանոթության մեջ՝ անստու, որ Հ. Ա. Վարդանյանը, հենվելով Այվատյանի ձեռագրի վրա, ուղղում է անստու, և Աճառյանն էլ ընդունում է): Երկու ձևերն էլ համապատասխանորեն ծագում են հնի. stā-/stə- «կանգնել, դնել» արմատի stī (<stāi) և stū (<stau-) ածած ձևերից: Հնդեվրոպական այս արմատը մեծ զարգացում է կրել թե՛ ձևական, և թե՛ իմաստային տեսակետից. այդ արմատից է նաև հայերեն ստանալ, որի մասին մանրամասնորեն տե՛ս Արմ., 6, էջ 421: Մեր սաի/ստու բառի իմաստի համար համեմատելի են ռուս. при-стойный «պատշաճ, վայելուչ, կարգին», հուն. *σταῖον* «կարգի կանոնի դնել, ոտքի վրա կանգնեցնել, պատրաստել, հանդերձել, հագցնել», ռումին.-իտալ. *assestare* «կարգի բերել», հուն. *σταῖς* «հրավունք, օրենք», գոթ. *staua*, i. «ատյան, դատ, դատաստան, օրենք» և այլն:

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ И ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Член-корр. АН АрмССР Э. Б. АГАЯН

(Резюме)

В статье предлагается этимология следующих армянских корнеслов: *alat* „ласка, любовь“, *alatel* „скорбеть, плакать“ <и. е. *el-*, *ol-* звукоподражательный корень, *ank'-at* „бедный, неимущий, нуждающийся“ <и. е. *ank-* „насилие, стеснение, необходимость, нужда“, *astuč astuč*), *astuč* (*astic*) „сухой“ <и. е. *azd-* + арм. суф. — *uč/ič* (нераспространенный и. е. корень *ās* „гореть, обжигать“), *awet/awēt* „радостная весть, привет, приветствие“ <и. е. *aud-*, *aued-*, *auēd-* „говорить“, *gav-ak* „таз, круп“ <и. е. *va-*, *uat/va-p-* „гнуть, огнать, нагибать“, *erd/herd/hurd* „отверстие посередине потолка крестьянской избы, служащее окном (часто и входом), кровля, дымоход“ (*erdakič* „сосед“, *erdahamar* „число дымов, хозяйств“, *erdawor* „домохозяин, домочадцы, семья“) <и. е. *per-*, *perə* „вход, проход“, *tew* „крыло“ от распространенной формы *ptewo-* и. е. корня *pet-*, *pte-* „летать, упасть“, *hak*. 1. склонный к чему-либо; 2. против <и. е. *sag-* „выслеживать, разведывать“, *husk* „после“ <и. е. *postwo* от корня *pos* „после“, *stī/stū* „порядок, приличие“ <и. е. *stā-*, *sto-*, *sti-*, *stu-* „стоять, класть, помещать“ (ср. русск. при-стойный), *hat-anel*, „резать, отрезать“ <и. е. *rəu-d-* „резать (ударом)“.